

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3/18
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30 ապրիլի 2019թ.

քաղաք Երևան

2019 թվականի ապրիլի 30-ին, ժամը 15.00-ին տեղի ունեցավ «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ կամ Համալսարան) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստը (այսուհետ՝ Նիստ): Խորհրդի 28 գործող անդամներից նիստին մասնակցում էին հետևյալ 21-ը.

1. Արմեն Հարությունյան – Խորհրդի նախագահ,
2. Վիկտոր Աբրահամյան -- Խորհրդի անդամ,
3. Թոռնիկ Ալիյան – Խորհրդի անդամ,
4. Արմեն Բաբայան – Խորհրդի անդամ,
5. Աշոտ Գիլոյան – Խորհրդի անդամ,
6. Ջուլիետտա Գևորգյան – Խորհրդի անդամ,
7. Գուրգեն Եղիազարյան – Խորհրդի անդամ,
8. Սերգեյ Երիցյան – Խորհրդի անդամ,
9. Վոլոդյա Էլբակյան – Խորհրդի անդամ,
10. Աղավարդ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
11. Գոռ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
12. Արեգ Խոջոյան – Խորհրդի անդամ,
13. Քրիստինե Խուրշուդյան – Խորհրդի անդամ,
14. Արմինե Հովհաննիսյան – Խորհրդի անդամ,
15. Գոհար Մամիկոնյան – Խորհրդի անդամ,
16. Արփիինե Մկրտչյան – Խորհրդի անդամ,
17. Գարիկ Սարգսյան – Խորհրդի անդամ,
18. Գագիկ Սարգսյան – Խորհրդի անդամ,
19. Նունե Սարուխանյան – Խորհրդի անդամ,
20. Նունե Միմոնյան – Խորհրդի անդամ,
21. Կարեն Ղարախանյան – Խորհրդի քարտուղար:

Նիստը նախագահում էր Խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը:

Խորհրդի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց տալ կարծիք: Օրակարգի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան: Քվեարկությամբ միաձայն հաստատվեց նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ 15.04.2019թ.-ին Համալսարան այցի մասին զեկույց:
2. Թվով երեք Փակ բաժնետիրական ընկերության (գիտական կենտրոնների) բաժնետոմսեր Հիմնադրամի կողմից ի սեփականություն ընդունելու հարցը (նվիրաբերվում է ՀՀ կառավարության կողմից):
3. ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող գույք (Օրգանական գյուղատնտեսության ուսումնասիրության համալսարան կենտրոն) Հիմնադրամի կողմից ի սեփականություն ընդունելու հարցը (նվիրաբերվում է Շեն Բարեգործական հասարակական կազմակերպության կողմից):
4. Ընթացիկ հարցեր:
 - 4.1 Հիմնադրամի կառուցվածում և հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու և հաստատելու հարցը:
 - 4.2 «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի «Շիրակի Ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու և հաստատելու հարցը (մասնավորապես պայմանավորված է մասնաճյուղի գտնվելու վայրի փաստացի փոփոխությամբ):
 - 4.3 «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի «Ապարանի գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի կանոնադրության հաստատման հարցը:

4.4 Հիմնադրամի կողմից ՀՀ, Արագածոտնի մարզի Ապարան համայնքում սեփականության իրավունքով անշարժ գույքի ձեռք բերման (գնման) հարցը:

4.5 Հիմնադրամի անհատույց օգտագործման անժամկետ իրավունքով պատկանող` ՀՀ, Արմավիրի մարզ, Մերձավան համայնք, Երևանյան խճուղի. 2-րդ փակուղի, թիվ 6 հասցեում գտնվող անշարժ գույքը հետ վերցնելու ՀՀ կառավարության առաջարկի և հնարավոր փոփոխությունների տրամադրման հարցը:

4.6 «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաձյուղի նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման հարցը (մասնավորապես պայմանավորված է Մասնաձյուղի անվան, Մասնաձյուղի գտնվելու վայրի հնարավոր փոփոխությամբ):

4.7. Հիմնադրամի բյուջեյի 29.01.2019թ.-ին հաստատված նախագծում փոփոխություններ կատարելու հարցը:

Հարց 1

Բացման խոսքով հանդես եկավ Խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը, ով քննարկման դրեց օրակարգի 1-ին հարցը` ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի` 15.04.2019թ.-ին Համալսարան այցի մասին: Հարցի շուրջ զեկուցեցին նախագահող Արմեն Հարությունյանը և Հիմնադրամի տնօրեն ու Համալսարանի ռեկտոր Վարդան Ուռուտյանը:

Հարցի շուրջ արտահայտվեց նաև Խորհրդի անդամ Գագիկ Սարգսյանը:

Հարց 2

Նախագահող Արմեն Հարությունյանը քննարկման դրեց օրակարգի 2-րդ` թվով երեք Փակ բաժնետիրական ընկերության (գիտական կենտրոնների) բաժնետոմսեր Հիմնադրամի կողմից ի սեփականություն ընդունելու հարցը (նվիրաբերվում է ՀՀ կառավարության կողմից): Հարցի շուրջ ելույթով հանդես եկավ Հիմնադրամի ռեկտոր Վարդան Ուռուտյանը: Ներկայացրեց ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 750-Ա որոշումը.

1. «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը` 77.210.00927, Արարատի մարզ, Մասիսի ենթատարածք, գյուղ Դարակերտ) վերակազմավորման ձևով վերակազմակերպել «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ` 1-ին ընկերություն): 1-ին ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանել 50000 դրամ, որը բաժանված է 5 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսի` յուրաքանչյուրը 10000 դրամ անվանական արժեքով: 1-ին ընկերության բոլոր բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: 1-ին ընկերության պետական սեփականություն հանդիսացող բոլոր 100 տոկոս բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

2. «Երկրագործության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը` 38.210.01559, Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Իսի Լե Մուլին 1) վերակազմավորման ձևով վերակազմակերպել «Երկրագործության գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ` 2-րդ ընկերություն): 2-րդ ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանել 50000 դրամ, որը բաժանված է 5 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսի` յուրաքանչյուրը 10000 դրամ անվանական արժեքով: 2-րդ ընկերության բոլոր բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: 2-րդ ընկերության պետական սեփականություն հանդիսացող բոլոր 100 տոկոս բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

3. «Մանդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը` 42.210.02172, ք. Երևան, Շենգավիթ, Մասիսի խճուղի 107/2) վերակազմավորման ձևով վերակազմակերպել «Մանդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ` 3-րդ ընկերություն): 3-րդ ընկերության կանոնադրական կապի տալի չափը սահմանել 50000 դրամ, որը բաժանված է 5 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսի` յուրաքանչյուրը 10000 դրամ անվանական արժեքով: 3-րդ

ընկերության բոլոր բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: 3-րդ ընկերության պետական սեփականություն հանդիսացող բոլոր 100 տոկոս բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

Հարցի շուրջ արտահայտվեցին խորհրդի անդամներ Գոհար Մամիկոնյանը, Գոռ Խաչատրյանը:

Բաց քվեարկության դրվեց թվով երեք Փակ բաժնետիրական ընկերության (գիտական կենտրոնների) բաժնետոմսեր Հիմնադրամի կողմից ի սեփականություն ընդունելու հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 21 անդամներ: Ձայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 21,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը որոշեց վերակազմակերպման արդյունքում ստեղծվող «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն», «Երկրագործության գիտական կենտրոն», «Մննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերը նվիրատվության գործարքով ընդունել ի սեփականություն:

Հարց 3

Նախագահող Արմեն Հարությունյանը քննարկման դրեց օրակարգի 3-րդ՝ ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող գույք (Օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձարարական կենտրոն) Հիմնադրամի կողմից ի սեփականություն ընդունելու հարցը (նվիրաբերվում է Շեն Բարեգործական հասարակական կազմակերպության կողմից): Հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ համալսարանի ռեկտոր Վարդան Ուռուտյանը:

Հարցի շուրջ արտահայտվեցին խորհրդի անդամներ Գագիկ Սարգսյանը, Նունե Սարուխանյանը, Աշոտ Գիլոյանը:

Բաց քվեարկության դրվեց ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող գույք (Օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձարարական կենտրոն) Հիմնադրամի կողմից ի սեփականություն ընդունելու հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 21 անդամներ: Ձայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 21,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը Նիստին մասնակցող անդամների միաձայնությամբ որոշեց.

3.1. «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպությունից (պետական գրանցման համարը՝ 211.171.05001, ՀՎՀՀ 01503283. այսուհետ՝ Կազմակերպության), նվիրաբերության գործարքով, ի սեփականություն ընդունել ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող Օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձարարական կենտրոնը (իր ողջ գույքով):

3.2. Հանձարարել Հիմնադրամի տնօրենին ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործընթացների իրականացումը, այդ թվում՝ «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Ակունք համայնքի (այսուհետ՝ Համայնք) հետ համապատասխան ձեռակերպումները՝ կապված Համայնքի և Կազմակերպության միջև Հողատարածքի վարձակալության մասին թվով չորս պայմանագրերով (1. կնքված 11.01.2011թ., վավերացված սեղնամատյանում 17 համարով, հողամասի կադաստրային համարը՝ 07-009-116-428; 2. կնքված 11.01.2011թ., վավերացված սեղնամատյանում 18 համարով, հողամասի կադաստրային

համարը՝ 07-009-116-376; 3. կնքված 23.03.2011թ., վավերացված սեղնամատյանում 937 համարով, հողամասի կադաստրային համարը՝ 07-009-116-006; կնքված 23.03.2011թ., վավերացված սեղնամատյանում 938 համարով, հողամասի կադաստրային համարը՝ 07-009-116-429) Կազմակերպության վարձակալության իրավունքը նվիրատվության գործարքով Կազմակերպության կողմից Հիմնադրամին փոխանցելու գործարքների կնքումը:

Հարց 4.1

Նախագահող Արմեն Հարությունյանը քննարկման դրեց Հիմնադրամի կառուցվածում և հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու և հաստատելու հարցը: Հարցի առթիվ ելույթ ունեցավ համալսարանի ռեկտոր Վարդան Ուռուտյանը:

Հարցի շուրջ արտահայտվեցին խորհրդի անդամներ Գոռ Խաչատրյանը, Գոհար Մամիկոնյանը:

Բաց քվեարկության դրվեց Հիմնադրամի կառուցվածքում և հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու և հաստատելու հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 21 անդամներ: Չայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 21,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը որոշեց հաստատել Հիմնադրամի կառուցվածում և հաստիքացուցակում փոփոխությունները՝ ըստ ներկայացված նախագծի:

Հարց 4.2

Նոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը քննարկման դրեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Շիրակի Ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու և հաստատելու հարցը (մասնավորապես պայմանավորված է մասնաճյուղի գտնվելու վայրի փաստացի փոփոխությամբ): Հարցի մասին զեկուցեց իրավախորհրդատու Նարեկ Եղիազարյանը:

Բաց քվեարկության դրվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Շիրակի Ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու և հաստատելու հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 21 անդամներ: Չայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 21,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Շիրակի Ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի կանոնադրության մեջ փոփոխությունները՝ ըստ ներկայացված նախագծի:

Հարց 4.3

Նոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը քննարկման դրեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ապարանի գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի կանոնադրության հաստատման հարցը: Հարցի մասին զեկուցեց իրավախորհրդատու Նարեկ Եղիազարյանը:

Բաց քվեարկության դրվեց Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ապարանի գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի կանոնադրության հաստատման հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 21 անդամներ: Չայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 21,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ապարանի գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի կանոնադրությունը:

Հարց 4.4

Հիմնադրամի կողմից ՀՀ, Արագածոտնի մարզի Ապարան համայնքում սեփականության իրավունքով անշարժ գույքի ձեռքբերման (գնման) հարցը:

Բաց քվեարկության դրվեց Արագածոտնի մարզի Ապարան համայնքում սեփականության իրավունքով անշարժ գույքի ձեռքբերման (գնման) հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 21 անդամներ: Չայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 21,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը հավանություն տվեց Հիմնադրամի «Ապարանի գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի գործունեությունը առավել արդյունավետ կազմակերպելու, մասնավորապես՝ անասնագույն (հարակից սպասարկող հողամասերով) կառուցելու եւ տնկարաններ հիմնելու նպատակով, ՀՀ Ապարան համայնքում նշված նպատակին համապատասխան շուրջ 6հա հողատարածքի սեփականություն ձեռք բերելու գործարքին:

Հարց 4.5

Չոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը քննարկման դրեց Հիմնադրամի անհատույց օգտագործման անժամկետ իրավունքով պատկանող՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Մերձավան համայնք, Երևանյան խճուղի, 2-րդ փակուղի, թիվ 6 հասցեում գտնվող անշարժ գույքը հետ վերցնելու՝ ՀՀ կառավարության առաջարկի և հնարավոր փոխհատուցման տրամադրման հարցը: Հարցի մասին զեկուցեց ռեկտոր Վարդան Ուռուտյանը:

Բաց քվեարկության դրվեց Հիմնադրամի անհատույց օգտագործման անժամկետ իրավունքով պատկանող՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Մերձավան համայնք, Երևանյան խճուղի, 2-րդ փակուղի, թիվ 6 հասցեում գտնվող անշարժ գույքը հետ վերցնելու՝ ՀՀ կառավարության առաջարկի և հնարավոր փոխհատուցման տրամադրման հարցը:

Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 21 անդամներ: Չայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 21,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը որոշեց սահմանել, որ Հիմնադրամը կարող է հրաժարվել ՀՀ, Արմավիրի մարզ, Մերձավան համայնք, Երևանյան խճուղի, 2-րդ փակուղի, թիվ 6 հասցեում գտնվող անշարժ գույքի օգտագործման իրավունքից՝ համապատասխան փոխհատուցման դեպքում. այն է՝ Հիմնադրամի «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղը ՀՀ, Արմավիրի մարզ, Ոսկեհատ համայնք տեղափոխելու, տեղում առկա՝ Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությունում մասնաճյուղի գործունեությունն ապահովելու նպատակով, տեխնիկական վերազինումներ կատարելու հնարավորություններ ստեղծվեն:

Հարց 4.6.

Չոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը քննարկման դրեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղի նոր խմբագրությամբ կանոնադրության

հաստատման հարցը (մասնավորապես պայմանավորված՝ Մասնաճյուղի անվան, Մասնաճյուղի գտնվելու վայրի հնարավոր փոփոխությամբ):

Բաց քվեարկության դրվեց Հիմնադրամի «Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղի նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման հարցը:

Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 21 անդամներ: Չայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 21,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղի նոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ ըստ ներկայացված նախագծի:

Հարց 4.7

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը քննարկման դրեց Հիմնադրամի բյուջեյի 29.01.2019թ.-ին հաստատված նախագծում փոփոխություններ կատարելու հարցը: Հարցի մասին զեկուցեց ռեկտոր Վարդան Ուռուտյանը:

Բաց քվեարկության դրվեց Հիմնադրամի բյուջեյի հաստատված նախագծում փոփոխություններ կատարելու հարցը:

Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 21 անդամներ: Չայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 21,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը որոշեց հաստատել Հիմնադրամի բյուջեյի 29.01.2019թ.-ին հաստատված նախագծում հետևյալ փոփոխությունները.

- Նախագծի 13.-րդ բաժնում (Համակարգչային տեխնիկա) հավելյալ նախատեսել 25 միլիոն ՀՀ դրամ,
- Նախագծի 14.-րդ բաժնում (Լաբորատոր սարքավորումներ) հավելյալ նախատեսել 40 միլիոն ՀՀ դրամ,
- Նախագծի 19.-րդ բաժնում (Ներդրումներ) հավելյալ նախատեսել 10 միլիոն ՀՀ դրամ (Հիմնադրամի Բալանսի, Ոսկեհատ, Ակունք համայնքների մասով):

Օրակարգի հարցերը սպառվեցին, նիստը հայտարարվեց փակված: